յին գտեալ երես յոյժ ի բռնաւորաց, ըմբռնէր զոմանս թէ՝ ի նոցանէ ես, և զայլս կալեալ դրամս առնէր եւ պրծուցանէր, զի ունէր ընդ իւր չաւուշս եւ զիր հրամանաց ի վէզիրէ՝ զի զքսան եւ չորս արսն գտցէ։ Եւ նոքա փախան և եղեն անհերևոյթք։ Եւ նա մտանէր տանէ ի տուն, որոնէր եւ յուզէր ի փողոցս եւ ի ճանապարհս, ի շուկայս և ի խանութս՝ ի ցերեկի ոչ միայն, այլ և ի գիշերի՝ վրէժխնդիր յոյժ։ Սուրբ Սարգսցիքն[1]) որ վերասացաւ՝ արդարացուցեալ զանձինս իւրեանց ի բանն, և բազում անգամ և օրըստօրէ կային ի մէջ ուրախութեան և զհաբեղայն ընդ իւրեանս կողմ ունէին և ասէին. Զանասցո՛ւք և քաջ երևեսցուք ի վերայ նոցա, և զի մի խնդասցեն նոքա ի վերայ մեր. և զմահ նոցին լեզուաւ աղաղակէին։ Զի յորժամ անց յՈւսկիւտար վէզիրն, երթային ստէպ և գային զի մահացուսցէ զնոսայ։ Եւ կային ի մէջ գբոյն զաւուրս բազումս արքն այնոքիկ, և այլքն փախըստական մեծաւ երկիւղիւ՝ զի մի գտցին, մինչև կալանաւորքն մարդ առաքեալ առ տէֆտէրտարն, զի ունէին ծանօթութիւն ընդ նմա։ Եմուտ նա առ վէզիրն թէ Զի՛նչ չահ եթէ սպանանես զնոսա։ Ծ քսակ ըստակ կտրեալ հանեցին զնոսա։ Ցայլմէ կամէին սակաւ դրամիւ հանել, արգիլեալքն ոչ կամեցան, զի ելցեն և կրկին հրամայեսցեն և իշխեսցեն որոց և կամիցին։ Այսպէս մոլութեան ոգի լինէր յազգս մեր, առաւել և ընդ աւուրսն ընդ այնոսիկ միմեանց ներհակաբար տվին այժմ, և զԾ քսակն առեալ յումեմնէ[2]) զի տացեն յետոյ։ Եւ յորժամ նոքա ելին ի գբոյն, Սուրբ Սարգսայ չարքն ամօթալից և գլխիկոր եղեալ փախեան և ի կորուստ եղեն աւուրս ինչ՝ մինչ ի Դարթալ։ Եւ յետ աւուրց եկին և արարին դաւաճանու-

1) սր սարգսիքն. 2) յումեմն.